ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 662 - Ա

«ԱՐԲԵԻՏԵՌ-ՍԱՄԱՐԻՏԵՌ-ԲՈՒՆԴ ԴՈՅՉԼԱՆԴ Ի ՎԻ (ԷՅԷՍԲԻ)»-Ի ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԹԻՄԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը՝

1. Բարեգործական որակել «Արբեիտեռ-սամարիտեռ-բունդ Դոյչլանդ ի Վի (ԷյէսԲի)»-ի մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանման կողմից իրականացվող՝ 210,000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն Հայաստանյան արագ արձագանքման բժշկական թիմին» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Արբեիտեռ-սամարիտեռ-բունդ Դոյչլանդ ի Վի (ԷյէսԲի)»-ի մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանումը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը

բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկություններ՝ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

19.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ